## ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

**«Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի (ՎԶՄԲ** 8055-AM)
2015**թ. հունվարի** 1-**ից դեկտեմբերի** 31-**ը ընկած ժամանակահատվածի աուդիտի իրականացման**

17 փետրվար, 2015թ.

**Ծրագրերի անունը**: **«Էլեկտրամատակարարման հուսալիության»**,
**Խորհրդատվական ծառայություն. Նվազագույն գնի վրա հիմնված ընտրություն**
**ՎԶՄԲ վարկ №**-8055-AM; **Ծրագիր** No P116748,

Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից ստացել է վարկ «Էլեկտրա մատակարարման հուսալիություն» ծրագիրը ֆինանսավորելու նպատակով և նախատեսում է գումարների մի մասն օգտագործել «**Էլեկտրամատակարարման հուսալիության ծրագրի** (**ՎԶՄԲ** 8055-AM) 2015**թ. հունվարի** 1-**ից դեկտեմբերի** 31-**ը ընկած ժամանակահատվածի աուդիտ**» ծառայության ձեռք բերման համար:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նպատակն է աուդիտորին հնարավորություն տալ կարծիք հայտնելու Միջազգային հաշվապահական ստանդարտների խորհրդի (ՄՀՍԽ) կողմից հրապարակվող Միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների (ՄՖՀՍ) հիման վրա կազմված՝ «Էլեկտրամատակարարման հուսալիություն» ծրագրի (ՎԶՄԲ 8055-AM, Ծրագիր No P116748,) 2015թ. հունվարի 1-ից 2015 դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Ծրագրի հաշիվների մատյանը ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հիմքն է և այն կազմվում է ծրագրի հետ կապված ֆինանսական գործարքների արտացոլման նպատակով:

Ծրագրի ֆինանսական հաշվետվությունները ներառում են՝

ա) Ստացված գումարների ամփոփագիր՝ առանձնացված ձևով ներկայացնելով Համաշխարհային բանկից, ծրագրի շրջանակում այլ դոնորներից ստացված և պետական համաֆինանսավորման գումարները:
բ) Ծրագրի հիմնական բաղադրիչների և ծախսային կատեգորիաների մասով ծախսերի ամփոփագիր ընթացիկ տարվա և մինչ նշված ժամանակահատվածը կատարված ծախսերի մասով:
գ) Գումարների ստացման հայտերի ներկայացման համար օգտագործված ամփոփ հաշվետվությունների կամ ծախսային հաշվետվությունների ամփոփագիր:
դ) Նպատակային հաշվի քաղվածքներ:
ե) Ծրագրի կուտակված գումարները, բանկային մնացորդները և ծրագրի մյուս ակտիվներն ու պարտավորությունններն, եթե այդպիսին գոյություն ունեն, արտացոլող հաշվապահական հաշվեկշիռ:
զ) Հաշվապահական քաղաքականության կարևոր դրույթները նկարագրող և այլ բացատրական տեղեկատվություն պարունակող ծանոթագրություններ:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու աուդիտորական կազմակերպություններին (Աուդիտորական ընկերությունները, որոնք ներառված են Համաշխարհային Բանկի առ 2015թ. հոկտեմբերի 6-ի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի համար իրավասու Աուդիտորական Կազմակերպությունների ցանկում) ներկայացնելու ծառայությունների տրամադրման համար հետաքրքրության հայտ: Հետաքրքրված աուդիտորները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (Աուդիտորական կազմակերպության մասին գրքույկներ, Միջազգային ֆինանսական ինստիտուտների կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ այլ աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն):

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը 30 միավոր/
- Կազմակերպության փորձը ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող նմանատիպ ծրագրերում / առավելագույնը 70 միավոր /

Աուդիտորական կազմակերպությունն ընտրվելու է Համաշխարհային բանկի կողմից 2011թ. հունվարին (վերանայված հուլիս 2014) հրապարակված «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված «Նվազագույն գնի վրա հիմնված ընտրության» մեթոդի համաձայն:

Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ աշխատանքային օրերին ժամը 09.00-17.30, զանգահարելով +374 60-72-00-22: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2016թ. մարտի 2-ը՝ ժամը 11.00:


«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ<br>
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0084,<br>
Զորավար Անդրանիկի 1,<br>
պարոն Արամ Անանյան<br>
Հեռ: +37410-720010; Ֆաքս: +37410-720121;<br>
էլ.հասցե projectibrd@hven.am;